ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 փետրվարի 2025թ.

Նիստին մասնակցում էին տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Սուքիասյանը, հանձնաժողովի քարտուղար՝ Զարուհի Ապրեսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Աննա Սահրատյանը, Վրեժ Բեգլարյանը և Գայանե Բարեղամյանը:

Օրակարգում՝

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 70-Ն որոշման՝ արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում (ՀՈԱԿ) մատուցված ծառայության դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնությունից օգտվելու համար Բյուրեղավան համայնքի ղեկավարին դիմած՝ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխայի ծնողից ստացված դիմումի մասին:

Հանձնաժողովի քարտուղար Զարուհի Ապրեսյանը հանձնաժողովին ներկայացրեց, որ տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնությունից օգտվելու համար ներկայացված դիմումին կից ներկայացվել է արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Նա հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց արտոնության տրամադրման լրացված ամփոփաթերթիկը:

Քննարկումից պարզ դարձավ, որ ներկայացված դիմումը «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայության դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնությունից օգտվելու հիմքով է.

- **«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի համար դիմել են.**

1) Չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի երեխաներ՝

1.Անահիտ Պողոսյանը (Լիա Պողոսյանի ծնողը), ք. Բյուրեղավան, Ս. Վարդանյան փող., շ. 19, ոն. 2:

Հանձնաժողովը որոշեց՝

Առաջարկություն ներկայացնել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1.Լիա Պողոսյանի վերաբերյալ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ում մատուցված ծառայության օգտվելու համար փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն կիրառելու որոշում կայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Սուքիասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ջ. Ապրեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սահրատյան

_____ Գ. Բարեղամյան

_____ Վ. Բեգլարյան